

ԿՐՈՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅԻՍՈՒՍ ՓՐԿԻՉԸ

(Գր. ֆի. Պետովից)։

Հրէաստանի փոքրիկ քաղաքներից մէկը—Բեթղեհէմը ընկղմուած էր խոր քնի մէջ։ Հարաւային աստղալից երկինքը տարածել էր գաշտերի վերայ իւր մութ թևերը։ Միայն հեռուում պայծառ կերպով մի խարոյլ էր վառաւում։ Այնուեղ հովիներն էին պահպանում իրենց հօտը։ Ամեն բան հանգիստ էր։ Միայն երբեմն հեռուից լաւում էր պահպան շների հաջոցը և կամ քնի մէջ ընկղմուած որ և է ոչսարի մայումը։ Աստղալից երկինքում՝ յանկարծ լսելի եղաւ հրեշտակների քաղցրահնչիւն երգը—երգ խաղաղութեան, սիրոյ և ներողամտութեան։ Այսպիսի մի հանգամանքի մէջ, ահա սրանից 1909 տարի առաջ ծնուեց Յիսուս Քրիստոս, Աստուծոյ Որդին, երկրիս վերայ իջաւ Աստուծոյ ճշմարտութիւնը։

Մանուկ Յիսուսի համար ոչ մի տան մէջ տեղ չկարո՞նա առաջին ապաստանարանը քարայրն էր, ուր գիշերում էր հօտը։ իսկ նրա օրօրոցը—անառունների մասուրը Այժմ այդ այրը զարդարուած է փառաւոր կերպով։ Յատակը մարմարեայ, կամարների վերայից քաշած է մետաքս, առաստաղից կախուած են մի քանի շարք արծաթեայ և ոսկեայ կանթեղներ։ Սակայն այդ բոլորից այրը ոչ մի օգուտ չունեցաւ։ Նա անգնահատելի է իւրաքանչիւր քրիստոնեայի համար ոչ թէ իւր ճոխ սպասներով, այլ նրանով, որ այնուեղ երկիր իջաւ Աստուծոյ ճշմարտութիւնը։ Այս ճշմարտութիւնը արտաքին զարդարունքի կարիք չունէր։ Նա ինքն ըստ ինքեան գեղեցիկ է։ Այդ պատճառով և Աստուծոյ Որդին աղքատ կոյս Մարիամի սրբույց կերպարանքով աշխարհ եկաւ, ծնուեց ալրի մէջ, իսկ վերջերը նոյն իսկ իւր գլուխը դնելու տեղ չունէր։

Ով հաշիւներով էր ապրում, ագահ էր—կարիք չունէր Յիսուսի յետից գնալու—իսկ ում հարկաւոր է ճշմարտութիւնը, նա կծառի ձեռք բերել այն,—կերթայ հիւսն Յովսէփի որդու մօտ:

Փրկչի մսուրի մօտ երկրպագութեան և կան նախ աղքատ հովիւները, ապա հեռաւոր աշխարհների իմաստունները—մոգերը, որոնք ընծայաբերեցին Նրան ոսկի, կընդրուկ և զմօւռս:

Դոյութիւն ունի մի հետաքրքիր աւանդութիւն չորսորդ մոգի՝ Արտաբանի մասին, որի համար աւետարանի մէջ ոչ մի խօսք չկայ: Աւանդութիւնն ասում է, որ այս իմաստունը, տեսներով պայծառ աստղը երկնքի վերայ, ցանկացաւ նմանապէս նորածին Քրիստոսին երկրպագել Ծախեց իւր պալատներն ու կայքերը և գնեց երեք թանկագին հազուագիւտ քարչ Պէտք էր շտապել և միւս ընկերներին հասնել Եւնա շտապում էր: Մի քանի ժամ էր մնացել ընկերներին հասնելու համար: Արտաբանը գնում էր անտառի միջով: Այստեղ նա տեսնում է ուշաթափութեան մէջ ծանր տենդով բռնուած մի հրէային Խոնչ աներ: Մնար հիւանդի մօտ—ընկերներից կղրկուէր, նրանք կերպային և ինքը կմնար, թողնել հրէային անօդնական—խիղճը չէր թոյլ տալիս երկար ժամանակ Արտաբանը ոչինչ վճռել չէր կարողանում: Վերջապէս խղճահարութիւնը յաղթեց:—«Դու ինքդ սէր ես», ասաց Արտաբանը մտօվին գառնալով նորածին թագաւորին, «Որտի մէջ առանց խիղճ ունենալու քեզ ծառայել չի կարելի»:

Բաւական ժամանակ անցաւ, մինչև որ հրէան ուշքի եկաւ: Արդէն կէս օր էր: ընկերներին հասնել չէր կարող: Բայց հրէան միիթարեց Արտաբանին: «Ես չգիտեմ թէ Մեսիան ծնուել է, բայց եթէ նա ծնուել է, անպատճառ Բեթղեհէմումն է, թողք քա ընկերներդ գնացած լինին, ինքդ մի ընկերութիւն կազմակերպիր և գնա Բեթղեհէմ»: Արտաբանն այդպէս էլ կատարեց: Վաճառեց թանկագին քարերից մէկը, որի համար նա մեծ գումար ստացաւ և քարվանով ճանապարհ ընկաւ դէպի Բեթղե-

հէմ։ Ահա և վերջինս։ Սակայն Արտաքանն ուշացել էր Մարիամն ու Յիսուսը փախել էին Եգիպտոս, իսկ Տեղադրէմի փողոցներում տեղի ունէր կոտորած։ Հերովդէսի զինուօրները կոտորում էին մանուկներին։ Արտաքանի տան տիրուհին ևս մի երեխայ ունէր և աղաջում էր նրան աղտտել իւր երեխային։ Խղճահարուելով՝ Արտաքանը հանեց երկրորդ թանկագին քարը և տուեց զօրապետին։ որ երեխային հանգիստ թողնի։ Նրա մօտ մնաց միայն մի քար։ Այդ քարը իւր հետ՝ Արտաքանը շատ երկրներ ման եկաւ ճշմարտութեան թագաւորին գտնելու համար։ Ամեն տեղ հանդիպում էր նա վշտի, տանջանքի, հիւանդութիւնների և Արտաքանը ամենքին օգնում էր։ մէկին սիրալիր խօսքեր ասելով և մխիթարելով, միւսին փողով, որ մնացել էր նրա մօտ առաջին քարի վաճառումից, երբ լորդին՝ բժշկական գիտութիւնով։ Անցել էին երեսուն երկար և ձիգ տարիներ։ Արտաքանը լսեց, որ Յիսուս Քրիստոս Հրէաստանումն է և ասաց. «Սա անպատճառ նա է, գնամ երկրպագեմ նրան իմ վերջին թանկագին քարը ընծայելով։

Արտաքանը եկաւ երուսաղէմ, Յիսուսին տանումէին Գողգոթայ խաչելու։ — «Դարձեալ ուշացայ», — արտմութեամբ հառաջեց նա և շտապեց խաչելութեան տեղը։ Զինուորները նրա ճանապարհը կտրեցին։ նրանք բերում էին մի հրաշագեղ աղջիկ։ Վերջինս թռաւ Արտաքանի մօտ, գրկեց նրա ծնկները և արտասուալից աչքերով աղաչեց։ «Ինքն Աստուած է քեզ ինձ մօտ ուղարկել»։ Արտաքինովդու ինձ հայրենակից ես երեսում, իսկ ես այստեղ միայնակ եմ այս օտար քաղաքում, և իմ վախճանուած հօրս պարտքերի համար ինձ վաճառում են նախատինքի։ Ոզատիր ինձ, բացի քեզնից ոչ ոքից ես յոյս չունեմ»։ Խըդճահարուեց Արտաքանը։ — «Հարկաւոր չէ քեզ, երեխ, Տէր, իմ ընծան։ սրան դու ես ինձ մօտ ուղարկել, թող լինի քո կամքը»։

Արտաքանը տուաւ իւր վերջին քարը։ Նոյն րոպէին երկիրը ցնցուեց, տները շարժուեցին։ Հարեան տան տա-

նիքից պոկուեց մի քար և ցած ընկաւ ու հարուածեց Արտաքանին։ Կեանքի վերջին բոպէին երեաց նրան երկար ժամանակից ի վեր փնտռած ճշմարտութեան թագաւորը, և ասաց, «Ճշմարիտն եմ առում՝ քեզ, այն ամենը, ինչ որ դու արիր իմ փոքր եղբարցո, ինձ արիր»։ Եւ Արտաքանը մեռաւ ուրախ, վերջապէս նա էլ գտաւ Փրկչին, ընդունուած էր և նրա ընծան։

Փրկչի ծննդից անցել էր 30 տարի։ Քրիստոս մկրտուեց Յորդանանում և ահա մենք տեսնում ենք նրան անապատում ծում պահելիս և աղօթելիս։ Չորս կողմը տիրում է խորին լուսութիւն և անմարդաբնակ է։ Հեռուն այրուած է օրուայ տապով։ Քրիստոս Փրկիչը խորին մըտած մունքի մէջ է. այնտեղ, անապատի միւս կողմը մարդկանց սրտերը նմանապէս այրուած են չարութիւնով և անարդարութիւնով, և նոցա պէտք է կենդանացնել։ Չար ոգին փորձում է Աստուծոյ Որդուն յետ կանգնեցնել աւետարանը քարողելուց, նա գուշակում է մարդկանց սիրով և բարւոյ գեղեցկութեամբ գրաւելու փորձի անյաջողութիւնը, և ուրիշ միջոցներ է ցոյց տալիս աշակերտ գտնելու համար. առաջարկում է Քրիստոսին իւր ծառայութիւնները՝ նրան ամբողջ աշխարհը հնազանդեցնելու համար. միայն թէ նա, Տէրը, լսի իրան, — չար ոգուն, ծառայի և երկրագագի նրան։ Փրկիչը պատասխանում է, որ միմիայն Իրան պէտք է ծառայել։ Այն ժամանակ, յաղթուած չար ոգին թողեց նրան և հրեշտակներն եկան Փրկչին ծառայելու։ Բարւոյ և չարի մէջ որ և է յարաբերութիւն մերժուած է։ Չարին և անարդարութեանը մահուան կոիւ է յայտարարուած։ Աստուծոյ Որդին գալիս է աշխարհ օձի գլուխը ջախջախնելու. երկրի վերայ ծագում է Աստուծոյ ճշմարտութեան արշալոյսը, հասնում է բարւոյ յաղթանակի օրը։

Սկսւում է Աստուծոյ թագաւորութեան քարողը, Յիսուս Քրիստոս շրջում է գիւղից գիւղ, քաղաքից քաղաք քարողելով ճշմարտութեան աւետարանը։ Մովի ափը, Ջրհորի մօտ գտնուած քարը, կանաչազարդ դաշտերի մէջ

լերան դլուխը, Սովոմնի տաճուի մարմարեայ դաւիթը, հրէից աղքատ ժողովարանը և մաքսառի ու փարիսեցու տունը, — բոլորը նրան հարկաւոր են մարդկանց ապաշխարութեան, նոր կեանքի, մարդու իրան մէջը Աստուծոյ թագաւորութիւնը հաստատելու համար, նա շրջապատուած է միշտ ժողովրդի ահադին բազմութեամբ:

Ճշմարտութեան պապակողները, հոգւով ճնշուածները և մարմիսով տանջուածները սերտ մօտենում են նրան, նրա խօսքերը լի են զարմանալի սիրով, և հայեացքը՝ ցաւակցութեամբ ու ներողամտութեամբ, հազարաւոր տանջուած հոգիների համար ցնծութիւն են բերում, ֆուզովուրդն օրհնում է նրան, անուանում է մարդարէ, պաշտում է նրան իրրե Աստուծոյ Որդու, Դրա հետ զուգընթացաբար մեծանում է նախանձը և ատելութիւնը դպիրների և փարիսեցիների, նոքա հետևում են Քրիստոսին քայլ առ քայլ և կամենում են մի խօսք լսել նրան չարախօսելու համար, Վերջապէս նրանք համնում են իրանց նպատակին — Քրիստոսին գատապարտում են մահուան:

Մօտենում են տանջանքի օրերը, Գառը դնում է զենուելու, Ուրախ Երուսաղէմը հազարաւոր մարդիկ է ուղարկում նրան դիմաւորելու, Լաւում են ցնծութեան ձայներ, շարժում են ձիթենու ճիւղեր, ճանապարհը ծածկուած է կանաչով, իսկ Յիսուս տրտմութիւնով լի, արտաստքն աչքերին, նայում էր ժողովրդին:

Խեղճ կոյր մարդիկ, Յիսուս գնում է նրանց անարդարութեան չարից փրկելու, իսկ նոքա կարծում են թէ նա պիտի նրանց հոռվմէական լծից ազատէ, Նրանք չեն հասկանում, որ չկայ աւելի սարսափելի լուծ, քան չարի և անիրաւութեան լուծը, Եւ ահա այս չարն ու անարդարութիւնը ամեն տեղ տիրում են, Յիսուս խաչուած է Քողգոթայի վերայ, Դպիրներն ու փարիսեցիները նախատում են նրան, Ամեն բան վերջանում է . . . նա — Քրիստոսը անշնչացած է, նրան դնում են գերեզմանի մէջ, գլորում են քարը վերան և կնքում: Զարը ցոյց տուեց

իւր ոյժը, սակայն մի և նոյն ժամանակ յայտնուեց նրա ամրող անզօրութիւնը, յայտնուեց Աստուծոյ ճշմարտութեան վսեմութիւնը։ Դողդոթայի վերայ աւազակը հաւատաց Քրիստոսին և հարիւրապետն ականատես լինելով անցած դէպքերին, ասում է. «Ճշմարտապէս նա Աստուծոյ Որդի էր»։ (Մատթ. իշ. 54)։ Անցաւ երեք օր, գերեզմանաբարը ձգուած էր մի կողմ և մահուան կապանքները խորտակուած — Քրիստոս յարութիւն առաւ։ Ճշմարտութիւնը գերակշռեց, յաղթեց չարին, ազատուեց նոյն իսկ գերեզմանից, — այդ պատճառով էլ մեր Փրկիչն ասում է. «Ճանաչեցէք ճշմարտութիւնը և ճշմարտութիւնը ձեզ ազատ կդարձնի»։

Թարգմ. Արակ Վարդապետ.

